ՆԵԿԽԱՅԻՑ ԱՌԱՋ

Մարգարե Հիսուսի Վաղ Հետևորդները

[Հայերեն - Armenian – أرميني]

Աբդ-Ալիակ Ալ-Աշանտի & Աբդ-Ալռահման Փաուզ

Թարգմանությունը:
EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)
& Աննա Ռ. Հակոբ
Ստուգող հանձնաժողով:
Աբու Առամ

2014 - 1436

IslamHouse.com

﴿ ما قبل مجمع نيقية ﴾

باللغة الأرمينية

عبد الحق آل أشانتي - عبد الرحمن باوز

ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& آنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

2014 - 1436

IslamHouse.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵԿԻԱՅԻՑ ԱՌԱՋ

Մարգարե Հիսուսի Վաղ Հետևորդները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ[1]

Այն ընթացքում, երբ ազնիվ պրպտողը փնտրում է ճշմարտություն , նա կարիք է զգում փաստերի, ուստի այս համեստ աշխատությունը օգնում է այն անկեղծներին , ովքեր փնտրում են հասկանալու մարդկանց հավատքի ծագումը ,որին հետևել է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) ուսմունքը :

«Նիկիայից Առաջ» աշխատությունը չպետք է դիտել որպես «Մահմեդականության պրոպագանդա» կամ հակում,այլ ազնիվ հայացք ապահոված որակավորված գիտնականների փաստերին: Նոյնպես, այս աշխատությունը, ցանակնում է հեռու մնալ Աստվածաշնչին ապավինելուց և կուրորեն մեջբերելուց, որպեսզի ապացուցի Հիսուսի ուսմունքները:Չնայած, կտակարաններում գոյություն ունեն որոշ ակնհայտ ճշմարտություններ, այն Ղուրանում նշված անբիծ Աստվածաշունչը, Իջիլը, չէ , այնպես, ինչպես տրվել է Հիսուսին :

---

1 Այս Գրքի, «Նիկիայից Առաջ» բնօրինակը ավարտվել է 1998 թվականին Պողոս Աղդայի և Թիմ Բռուսերի կողմից, և Աբդուլ Հակ և Աբդուռ-Ռահմենի կողմից վերանայվել է Դավայի բաժնում.

Գնահատելով վաղ Քրիստոնեության և Իսլամի միջև գոյություն ունեցող համեմատությունները, իրենց փաստերը հասանելի են ընթերցողին և ներկայացված են այնպես,որ ցանկություն չի առաջանում հակազդելու:Այն ընթերցողների համար է, որպեսզի նրանք գիտակցեն և ընդհանուր հայտարարի գան ներկայացված վկայություններով :Վերջին երեք հարյուր տարվա ընթացքում ներկայացված այսպիսի հետազոտությունները նոր երևույթ չեն: Օրինակ Ջոն Թոլանդը, իր «Նազովրեթցին» գիրքը գրել է 1718 թվականին, որտեղ նա արդեն նկատել է վաղ շրջանի մահմեդականների և Հիսուսի հետևորդների հավատքների և գործունեությունների ընդհանրությունը:Ավելին, Ջոն Բիդլը գրեց «Իրական Կարծիքը Երրորդության Մասին», Տասներկու Փաստերը՛՛ աշխատությունը 1653 թվականին: Ջոզեֆ Փրիսթլին գրեց ութ գիրք , ներառելով՛՛Եկեղեցու Ընդհանուր Պատմությունը՛՛, որը տպագրվեց 1802 թվականին և «Կոռուպացված Քրիստոնեության Պատմությունը»,որը տպագրվեց 1871 թվականին:Ա.Ս. Մագիֆֆերթը գրեց «Քրիստոնեության Պատմությունը Մարգարեական Ժամանակաշրջանում» աշխատությունը ,որը տպագրվեց 1897 թվականին: «Առաքելական Աղբյուրը տպագրվեց 1902 թվականին: Իսկ «Վաղ Քրիստոնյաների Աստված» աշխատությունը 1924 թվականին:

Սինայի ձեռագրի հայտաբերումը, որը վաղ, համարյա ավարտուն ,չորրորդ դարի ձեռագիր է ,իր հետ բերեց գիտնականների գործածությանը պիտանի ավելի շատ վկայություններ: Գործածելով այս երկու հնագույն աղբյուրները և ժամանակակից հետազոտությունները, որոնք հիմնված են վաղ Քրիստոնեական գրերի հայտնագործության վրա ,ընթերցողին տրվում են այնպես, որ նրանք ընդունում են որպես ձայնային:

Այս աշխատանքների կազմավորման զրույցների ընթացքում, նշվել է , որ շատ ավետարանական Քրիստոնյաներ վիճում են ,որ այստեղ մեջբերված Քրիստոնյա գիտնականները «ոչ իրական Քրիստոնյաներ են:» Նույնիսկ, «Հայդ Փարք Անկյան Քրիստոնեական Ընկերությունը»[1] այնքան հեռու գնաց, որ ասաց, թե չկա ոչ մի աստվածաբան, ում կարելի է կոչել Քրիստոնյա , քանի որ նա զգում է,որ աստվածաբանությունը Քրիստոնեության թշնամին է:Ճշմարիտ է,որ աստվածաբանների մեծամասնությունը չեն հասկանում, որ Աստվածաշունչը «աստվածային լուսաբանում է», այլ ընդունում են այն, որպես ներշնչանքի և

---

1 Սա հայտնի և յուրահատուկ խումբ է, որը ներառում է Լոնդոնի ֆունդամենտալիստ ավետարանական Քրիստոնյաների լայն շրջան, ովքեր քարոզում են ավետարանական Քրիստոնեությունը, Լոնդոնի Հայդ Փարք Խոսնակների Անկյունում.

մեկնաբանության համակցում: Շատ դեպքերում այս աստվածաբանները կասեն, որ Հիսուսն ինքը «աստվածային լուսաբանում» էր և ազատ էր մերժելու այն գաղափարը, որ Աստվածաշունչը կատարյալ է:

Ուստի, հասկանալի է , որ Քրիստոնյաները, ովքեր հավատում են Աստվածաշնչի կատարյալ ամբողջությանը, դառնում են այդպիսի գիտնականների ախոյանները: Այնուամենայնիվ, Քրիստոնյա ավետարանականների դժգոհությունը աստվածաբանների նկատմամբ, բավական հակասական և անհիմն են:

Հակասական է, քանի որ այն հիմնված էր այն աստվածաբանության վրա, որի շշնորհիվ «քրիստոնեական դոկտրինը աճեց և ողջամիտ դարձավ, և քրիստոնյաների մեծամասնությունը պետք է երախտապարտ լինեն,որ աստվածաբանությունը բացատրեց՛ իրենց հավատքի շատ կողմերը՛՛:

Մեջբերված գիտնականների մեծամասնությունը լավագույն գիտակներ են, ովքեր գործում են որպես Քրիստոնյաներ:Օրինակ, Ջեյմս Դուննասի «Քրիստոնեաբանության Կայացումը» գիրքը, զննում է այս փաստը: Թեև մի կետում նա ասում է. «չկա ոչ մի իրական վկայություն կապված Հիսուսի վաղ սովորույթներին ,որոնք արդարացիորեն կարող են կոչվել աստվածության բանականություն,» (էջ.60) նա ոչ մի փորձ չի անում ներողություն խնդրելու

Երրորդության Քրիստոնեությունից իր համոզմունքի համար: Ուղղակի փաստ է , որ նա քրիստոնյա է:Նմանապես, Նոր Կտակարանի գիտնական, Մայքլ Ռամսին, Անգլիկան եկեղեցու Արքեպիսկոպոս էր: Մենք կատարյալ համոզված ենք , որ մեջբերվող հեղինակներից ոմանք Քրիստոնյաներ են, այսպիսով, մարդիկ կարող են ընդունել նրանց նվիրված հետազոտությունները:

Մենք նույնպես, նշում ենք Հէյքքի Ռայսեննին, մի քրիստոնյա մարդու, ով հետաքրքրված էր Քրիստոնեա-Մահմեդական երկխոսությամբ, ով գրում է.՛՛ Այսօր, Նոր Կտակարանի գիտնականներին պարզ է ,որ Նոր Կտակարանում չկա Երրորդության Դոկտրինին մոտ, մոտավոր նմանությամբ գոնե որևէ բան:Այս գիտակցումը ,կարող է լինել երկխոսության թարմ սկզբնակետ :՛՛[1]

Մենք չենք պատրաստվում դատել, արդյոք նրանք իրական Քրիստոնյաներ են ,թե ոչ, ոչ էլ անպատասխանատու և զգացմունքային ավետարանական Քրիստոնյան կարող է այսպիսի դատումներ անել: Մենք այս գրքույկը միավորել ենք, որպես ուղղակի ուսումնասիրության հիմք, անկեղծ հետազոտողի համար:

---

1 Հայքքի Ռայսեն «Հիսուսի նկարագիրը Ղուրանում» 1980, էջ.127

Այս պատմաբանների, հետազոտողների և գիտնականների աշխատությունների մեծամասնությունը վստահելի են քանի որ մենք զգուշացել ենք ավելի վիճելի աղբյուրների մեջբերումներից, հաստատելու ,այն փաստը,որ նրանց հղումները, իսկության ապացույց են:

Օրինակ, 1829թվականին, Լինքոլնի, Բայգենթի և Լեյգի կողմից գրված ՛՛Սուրբ Արյունը և Սուրբ Գավաթը՛՛ աշխատությունում մենք գտնում ենք հղում, որը վերաբերում է Նագ Համմադի Մագաղաթներին: Չնայած ակնհայտ է, որ նրանց գիրքը ընթանում է անընդունելի վարկածով, այն հնարավորություն է տալիս կատարել հետագա հետազոտություններ պարզելու,որ Նագ Համմադի Մագաղաթների տեքստերը իրականում գոյություն ունեն:»

Մեր գործածած որոշ աղբյուրներում կան գրքեր ,որտեղ տեղ են գտել սուբյեկտիվ և օբյեկտիվ կարծիքներ: Այս դեպքերում ,մենք անտեսել ենք իրենց վարկածները և տեսությունները և միայն մեջբերել ենք այսպես կոչված հաստատված փաստեր: Օրինակ, մենք հղում ենք արել 1993 թվականի, «Հիսուսի Սեմինարի» Հինգ Կտակարաններից :Մինչ իրենց աշխատանքի հիմնական մասը վերաբերում է կտակարանների նորաբարության և գործածվող համաձայնեցված «կարծիքին», որոշելու Հիսուսի խոսքերի իսկությունը , մենք մեջբերել ենք նրանց գրքից , որը պատմական ապացույց է վկայում:

Ավելիին, Ալլահը նշել է Ղուրանում.

« Նրանք հետևում են միայն վարկածին և այն բանին, ինչ նրանց հոգիներն են ցանկանում, նույնիսկ երբ նրանց իջել է առաջնորդություն , իրենց Տիրոջից;»

(Ան- Նաջմ 53:23)

Մեր գործածած աղբյուրները,որոշ դեպքերում, Իսլամի նկատմամբ կարող են անպատշաճ թվալ,սակայն ավելի զարմանալի է գտնել զուգահեռներ, որոնք գոյություն ունեն վաղ Քրիստոնեության և Իսլամի միջև: Հաճախ այս անտեսանելի է հեղինակներին,սակայն ոմանք լիովին պատրաստ են ընդունել տվյալ զուգահեռը:Օրինակ, Հանս Քունգեթալը գրեց, որ «Հրեա-Քրիստոնեական և Իսլամի ավանդական և պատմական զուգահեռները անխուսափելի են:»[1]

Հանս Յոհակիմ Շուփսը[2] եկել է համանման եզրակացության, ինչպես պրոֆեսոր Այզենմանը:Իրոք, ինչպես նշել ենք,վաղ Քրիստոնեության և Իսլամի նմանությունները մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել: Այնպիսի հեղինակներ, ինչպիսիք

---

1 Քրիստոնեությունը և Աշխարհի Կրոնները – Երկխոսության ուղղիները Իսլամի, Հինդուիզմի և Բուդդայականության հետ, 1986 թվական, էջ.124

2 Աստվածաբանությունը և Պատմությունը Հրեական Քրիստոնեությունում,1949 էջ.342

Ֆրենսիս Դավիթը 1510-1579, Մայքլ Սերվետուսը 1511-1553թվ, Ադամ Նոյսերը մոտավորապես 1570թվ. և Գոն Թոլանդը 1718 թվականներին նկարագրում էին այսպիսի զուգահեռները մի քանի հարյուր տարի առաջ:[1]

Ակնհայտորեն, մենք գրում ենք որպես մահմեդականներ, սակայն, մենք փորձել ենք չներկայացնել սխալ տեղեկություն:Անցնելով ինքներս, «Իսլամին գալու» ուղղին, մենք ընկալել ենք դժվարությունները, հասկանալու , թե կոնկրետ ով է ասում ճշմարտությունը:

Մինչ այս մեջբերումները կազմելը, մենք զրուցել ենք Քրիստոնյաների հետ, ովքեր հետաքրքրված էին, և շատ քչերն էին տեղյակ Քրիստոնեության աղբյուրներին և զարգացմանը , ինչպես նաև Հիսուսի վաղ հետևորդներին վերաբերող պատմական նյութերին, որոնք ուսումնասիրել են շատ գիտնականներ, պատմաբաններ և աստվածաբաններ: Ուստի, մենք շահեկան մաղով անց ենք կացրել վաղ Քրիստոնեությանը վերաբերող շատ գրքեր և

---

1 Տես. Աղրիան Ռելանդ, Աշխատությունները վերաբերում են Մահմեդականությանը, 18-րդ դար էջ.215-22, նույնպես Ու. Ս. Գարնեթ, Ֆրենսիս Դեյվիդ, Միասնականության Հիմնադիրը,1941, Ռ. Հ.Բայնթոն, Որսված հերետիկոսները 1953, Դ. Բ. Փեյք, Միասնականության Գագաթնակետը, 1957, էջ. 5-6

հոդվածներ, որպեսզի ներկայացնենք ընթերցողին փաստական վկայություններ այնպես, ինչպես որ գոյություն ունեն Իսլամի լույսի ներքո: Ուստի, մենք հրավիրում ենք ընթերցողին անկեղծորեն արձագանքել և Ալլահի կամոք,նրանք կկարողանան հասկանալ և իմանալ ճշմարտությունը :

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ[1]

««Նրանք ասում են պարծենալով, « Մենք սպանել ենք Մեսիային, Հիսուսին, Մարիամի որդուն, Ալլահի Մարգարեին»- Սակայն, նրանք չեն սպանել նրան, ոչ էլ խաչել են նրան, սակայն, մեկ ուրիշն էր նմանվել նրան, նրանց համար: Եվ, իրոք, նրանք , ովքեր տարբերում են, կասկածում են դրանում :Նրանք ոչինչ չգիտեն դրա մասին և հետևում են միայն վարկածի: Եվ նրանք չեն սպանել նրան համոզված լինելով նրա ինքնությանը:»»

(Ան-Նիսաա 4:157)

Ղուրանի վարկածը, որ Հիսուսը ոչ սպանվել է, ոչ խաչվել և որ մեկ ուրիշն է սպանվել, որին նրանք

---

1 Սա մի գլուխ է չտպագրված Դաուա գրքից, Մինչ Նիկիյա , որը գրվել է Թիմ Բոուասը, Աբդուռ-Ռահմենը, և Փոլ Աղդաեն, Աբդուլլա Հակկը , երբ նրանք սովորում էին Լոնդոնի համալսարանի Արևելյան և Աֆրիկյան ուսուցանման դպրոցում:

ենթադրել են որպես Հիսուս, կանգնած է, հօգուտ Աստվածային ծագման: Շատերը վիճում են, որ եթե Մուհամմեդը լիներ կեղծարար, ապա խաչելությունը կլիներ վերջին մանրուքը, որ նա «կփոխեր»: Ամեն դեպքում, հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախախսլամական ժամանակարջանի Քրիստոնյաները հետևում են նույնպիսի բազմազան դոկտրինների, ինչպես մեր օրերում: Այս հավատքների մեջ էր մտնում այն, որ Հիսուսին չեն խաչել և շատ վաղ Քրիստոնեական աղանդներ , մերժում էին, որ խաչելություն է տեղի ունեցել: Այս հարց է առաջացնում, թե ինչու՞ են նրանք մերժում Հիսուսի խաչելությունը :

Հ.Մ Գվաթկին, իր Վաղ Եկեղեցական պատմություն գրքում ասում է.«Վաղ ժամանակաշրջանի Քրիստոնեության խոչընդոտը ոչ այնքան Հիսուսի աստվածայնությունն էր , այլ նրա խաչելությունը :»[1]

Որոշ առաջին խմբերը, որոնք հետևել են Հիսուսի ուղղուն ,նաև Ղուրանից շատ այլ պատմական աղբյուրներից բացի, հաստատում են, որ Հիսուսը չի մահացել խաչի վրա: Ջոն Թոլանդը, իր «Նազովրեցիներ» աշխատությունում նշում է, որ Պլատինոսը , ով ապրում էր 4-րդ դարում , ասաց, որ ընթերցել է «Առաքյալների Ճանապարհորդությունները» գիրքը, որը վերաբերել է Պետրոսին, Հովհաննեսին, Պողոսին և այլոց: Այլ տեղեկություններից, որ հայտնում

1 Հատոր 1. էջ.11

է գիրքը, այն է, որ Հիսուսին չեն խաչել, այլ նրա փոխարեն մեկ ուրիշին են խաչել և ուստի Հիսուսը և առաքյալները ծիծաղել են նրանց վրա,ովքեր հավատացել են ,որ Հիսուսը մահացել է խաչին:[1] Այն համապատասխանում է Բասիլեդիցների հավատքին և նրա հետևորդներին ու աշակերտներին, ովքեր հայտնի էին Բասիլիդացիներ անունով: [2]

Հ. Լինքոլնը, Մայքլ Բայգեթը և Ռիչարդ Լեյթը իրենց «Սուրբ Արյուն և Սուրբ Գավաթ»[3] հակասական և քննադատական հայտարարված գրքում ,նշում են պատմական հատված, Նագ Համմադիի Մագաղաթներից[4] և հայտնում են, որ այդ ձեռագրերը պարունակում **են** «Սեթի Պայմանագրեր» կոչված ձեռագրեր: Այստեղ նշվում է , որ Հիսուսին չեն խաչել,

---

1 Ջոն Թոլանդ, Նազովրեցիները 1718, էջ. 18: Այն կարելի է գտնել Բրիտանական Գրադարանում

2 Ջ, Սթիվենսոն, Նոր Օսեբիուս, Փաստաթղթեր, որոնք նկարագրում են Եկեղեցու Պատմությունը Մ.Թ 337 թվականին: Լոնդոն1957, էջ.82

3 1982. Էջ.409

4 Ձեռագրերը հայտնաբերել է եգիպտացի Մուհամեդ Ալի անունով մի հողագործ,Նագ Համմադի վայրում: Ձեռագրերը ուսումնասիրել է Ֆրանսիացի գիտնական և հնության գիտակ Ժան Դորեսը, ով աշխատում էր Կահիրեում.

չնայած խաչելություն տեղի է ունեցել, Ջոնը Սիմոն Սիրինացին էր, ոչ թե Հիսուսը :

Ջ. Սթիվենսոնը, Քեմբրիջի համալսարանի աստվածաբանության դասախոսը, նշեց ,որ Իրինեուսը նկարագրում է Բասիլեդեցների ուսմունքները:Քանի որ Բասիլեդիցիները և նրա հետևորդները հավատում էին, որ Հիսուսը Հրեաների աստվածն էր և այլ տարօրինակ բաներ տիեզերքի արարածների մասին, իսկ կապված Հիսուսի խաչելությանը նրանք ասում էին. «Նա ,ապա հայտնվեց երկիր որպես մարդ ,իշխանության ժողովուրդներին և ներկայացրեց հրաշքներ:Այդ պատճառով նա ինքը չտառապեց մահից, այլ ոմն Սիմոնը Սիրինացին, ստիպված լինելով, կրեց խաչը նրա փոխարեն: Սիմոնը կերպարանափոխվեց նրանից, այնպես, որ կարծեն, որ նա Հիսուսն է և խաչվեց սխալմամբ և տգիտությամբ:»[1]

Կորինթիոսը[2],Պետրոսի, Պողոսի և Հովհաննեսի ժամանակակիցը նույնպես ժխտում է,որ Քրիստոսը մահացավ խաչին և որ Քրիստոսը չտառապեց, որովհետև նա հոգևոր արարած էր:[3] Կորնթացիները նույնպես հավատացին, որ Հիսուսը չի մահացել խաչին, այլ մեկ ուրիշը, ով նման էր նրան:

---

1 Նոր Եսեբիուս,էջ.81-82

2 Նրա հետևորդները հայտնի են որպես Կորնթացիներ

3 Նոր Եսեբիուս, էջ. 96

Նույնպես, Քրիստոնյաների վաղ մի համայնք, որը կոչվում էր «Դոկետաե» պնդում էր , որ Հիսուսը երբեք ֆիզիկական մարմին չի ունեցել, այլ միայն երևակայական է եղել: Հետևաբար խաչելությունը առերևույթ էր, ոչ թե իրական:[1]

Մարկոսի Կտակարանում(15:21), հունական բառը թարգմանվել է որպես «կրել», որտեղ Սիմոն Սիրինացին «կրեց» խաչը, փաստորեն այն պետք է թարգմանվեր «դիմակայել»:Ոմանք. վիճում են այն հարցի շուրջ, որ փաստորեն, այս նշում է Սիմոն Սիրինացուն, ով կրեց խաչը և խաչվեց Հիսուսի փոխարեն:

Այս իհարկե համաձայն է վաղ խմբերի հավատքների հետ, ովքեր հետևում էին Հիսուսի ուղղուն: Սիմոն Սիրենացին Աստվածաշնչում, ոչ մի տեղ չի նշվել և ուստի հունարենի ուսումնասիրությունը անհրաժեշտ է:

Խաչելության այս բոլոր հասկացությունները տարբերվում են Քրիստոնեական «ուղղափառ» գաղափարից, նշելով , որ , Հիսուսի վաղ հետևորդների մեջ ,իրոք, գոյություն ունեն տարբեր հավատքներ: Հետագայում նրանց, «ուղղափառ» Քրիստոնյաները կկոչեն հերետիկոսներ, որոնց հավատքները ավելի

1 Լեոնարդ Ջորջ, «Հերտիկոսների և հերետիկոսության հանրագիտարան» 1995 և Նոր Եուսուբիուս էջ 47-48, 96,101-102 և 152

հեռու են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) ուսմունքներից, հավատքից և գործնականից:

Մեկ այլ հետաքրքիր վկայության դրվագ է ներկայացրել Կտակարանը ըստ Մարկոսի,գլուխ 15-ում, որը տեղեկացնում է, որ Պիղատոսը չգտնելով Հիսուսի մեղքը, հրամայում է ազատ արձակել նրան:

« Հետևելով Զատիկի սովորությանը, որը անհայտ էր կտակարանից դուրս, Պիղատոսը առաջարկեց ազատ արձակել Հրեա բանտարկյալի և առաջարկեց Հիսուսին, սակայն ամբոխը ... պահանջեց, որ Պիղատոսը ազատ արձակի Բարաբային և խաչելության ենթարկի Հիսուսին:»[1]

Վաղ Հունական մագաղաթներում, Բարաբային վերաբերվում էին որպես Բարաբայի Հիսուս: Այս առանձնապես հետաքրքիր է, ինչպես Գրեգորի Շաուն գրում է. «Կտակարաններից դուրս ոչինչ հայտնի չէ Բարաբայից: Նրա անունը արամեերեն է և նշանակում է «հոր որդի» ,Աբբա, այստեղ ծաղրաբար տալիս են Հիսուսին տրված կարգավիճակը:»[2]

---

1 Բրյուս Մեթսգեր և Մայքլ Դ. Քուգան, Աստվածաշնչի Օքսֆորդյան Ընկերակիցը ,Օքսֆորդի Համալսարանական Տեղեկատվություն1993, էջ.74
2 Իբիդ

Այստեղից, պարզ չէ, թե իրականում ում էին խաչել , քանի որ երկու կերպարներն էլ ունեին միևնույն անունները:Փաստորեն, նրան, ում ազատ էին արձակել կարող էին ավելի շատ ճանաչել , քան նրան , ում ըստ քրիստոնյաների, խաչել էին: Այդ բավարար չհամարելով, որոշ քրիստոնյաներ նշել են, որ «հոր որդին» բացառիկ տիտղոս չէր, հղում անելով «Աբբա» բառին:

Եղել է փաստարկ, որ հաշվի առնելով պատմաբաններ Տակիտոսի և Ջոզեֆոսի նշված խաչելությունը ,ապացուցվել է ,որ Հիսուսին խաչել են :Ամեն դեպքում, պետք է ասել, որ Ջոզեֆոսը և Տակիտոսը միայն ասել են, որ Հիսուս անունով բարեպաշտ, ով երկրպագում էր Աստծուն, ապրել, ուսուցանել և ավելի ուշ խաչվել է: Նրանց հաշվարկները ականատեսի չեն, ավելի հավանական է ,որ այն ծագել է Հրեաների և Հռոմեացիների մասսայական խոսակցություններից, որոնց վրա ազդեցություն է թողել Հիսուսը: Այն փաստը, որ Ջոզեֆոսը ծնվել է մոտավորապես 38 թվականին, հավաստում է որ նա պատմաբան, այլ ոչ թե ականատես էր: Օքսֆորդի համալսարանից Գեզա Վերմեսը ցույց է տվել,որ Ջոզեֆոսի աշխատանքները փոփոխվել են հետագա Քրիստոնյաների կողմից,ովքեր տեղադրել են իրադարձությունների իրենց տարբերակները:

ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Օվ, դուք, ովքեր հավատացել եք. եղեք Ալլահի օգնականներ, ինչպես ասաց Հիսուսը , Մարիամի Որդին աշակերտներին, «**Ովքե՞ր են իմ օգնականները հանուն Ալլահի:» Աշակերտները ասացին. «մենք ենք Ալլահի օգնականները:» Այնուհետ, Իսրայելի զավակների մի խումբ հավատացին և մի խումբ ոչ: Այսպիսով, մենք իշխանություն տվեցինք նրանց, ովքեր հավատացին ընդդեմ իրենց թշնամիների և նրանք դարձան հաղթողներ**:»

(Աս- Սաֆֆ 61:14)

Իր համբարձությամբ, Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) թողեց բազմաթիվ հետևորդներ, ովքեր վստահում էին նրա սովորեցրած ուսմունքին, որը կապված էր Աստծո[1] երկրպագության հետ: Ըստ Ղուրանի, նա երբեք չի ասել Աստծո կամ իր մասին այն, ինչի համար իրավասու չէր:Նա մարդ էր և Մարգարե, ով ասաց իր

---

1 Աստծո Միասնական գաղափարը և Հիսուսի մարգարեական մարդկային բնույթը հիմք հանդիսացավ շատ վաղ ժամանակաշրջանի համայնքների, ապրել ըստ Հիսուսի ուսմունքների: Այդ համայնքներից են Էբիոնիթները, Նազարովեթցիները, Սերինթիացիները, Բասիլիդացիները, Կարպոքրաթիացիները, Հիթսիսթարիացիները , Սումմաչիացիները և Էլկեսաստացիները:

հետևորդներին երկրպագել Մեկ Աստծո, ինչպես մահմեդականները:Ամեն դեպքում ,Քրիստոնյաների համար այս ամենը ոչ մի հետևանք չունի ,քանի որ նրանք Ղուրանը չեն համարում Աստծո խոսք:

Հետևաբար, այս բաժնի նպատակն է ներկայացնել տեղեկություններ այն հետազոտությունների մասին, որոնք կապված են այս թեմային:

Մ.Թ.մոտ 90 թվականներին ,եկեղեցու կողմից «Հերմասի Հովիվը» համարվում էր հայտնության գիրք և Սինակտիկուսի Կոդեքսի երկու գրքերից մեկը ,որը չեն ներառել ժամանակակից Աստվածաշնչում:[1] Այնտեղ գոյություն ունեն տասներկու պատվիրաններ, որոնցից առաջինն է. «հավատացեք, որ Աստված Մեկն է և որ Նա արարել է ամենը և կարգավորել է դրանք և որից դուրս գոյություն չունի և Նա ներառում է ամենը ,սակայն Ինքն Իրեն ներառված չէ: Վստահեք Նրան և ուստի վախեցեք Նրանից և վախենալով Նրանից ունեցեք ինքնակառավարում: Պահպանեք այս պատվիրանը և դուք կհեռացնեք ձեզանից թուլությունը, յուրաքանչյուր արարքում դրեք արդարամտություն և դուք կապրեք Աստծո միջոցով, եթե պահպանեք այս պատվիրանը :»

Այստեղ Աստված Մեկն է և Նա անհամեմատելի, անսահման է և հավատքի Անգլիական հաստատումը, Նիցցայի սկզբնաղբյուրը, ասում է. « Ես հավատում եմ

---

1 Առաքելական Հայրերը 1950թվական

Մեկ Աստծո , ամենազոր հորը , երկնքի և երկրի Արարչին և ամենի, տեսանելիի և անտեսանելիի և մեկ Տիրոջ Հիսուս Քրիստոսի , Աստծո միակ որդու , ով ծնվել է իր հորից ,ամբողջ աշխարհների առջև ,Աստծո Աստված, Լույսի Լույս, Աստծո Աստված, ծնված, ոչ արարված, լինելով միություն Հոր հետ , ով արարել է ամենը... եվ, ես հավատում եմ Սուրբ Հոգուն, Տիրոջը և Կյանք Պարգևողին, ով առաջացել է Հորից և Որդուց, ում Հոր և Որդու հետ միասին փառաբանում և երկրպագում են , ով խոսում է Մարգարեների հետ...»[1]

Ըստ Թեոդոր Զահնի, իր Առաքելական Աղբյուրի Հոդվածներում[2] ասվում է, որ մինչ Մ.Թ. 250 թվականները , հավատքը պարզապես այն էր. Որ « Ես հավատում եմ Աստծուն, Ամենազորին», որը այսօր Անգլիկան աղբյուրի տարր է: Ջ.Ռ. Հարիսը մեջբերում է Արիստեղեսին, վաղ Քրիստոնյա աստվածաբանին , ով ասում է, որ «Սկզբում Քրիստոնեական երկրպագությունը ավելի անբիծ միաստվածական էր , քան Հրեաներինը :»[3]

Քրիստոնեական եկեղեցու վաղ պատմության ընթացքում, գոյություն ուներ բարգավաճող խումբ, որը կոչվում էր «Էբիոնիթցիներ»: Տերմինի ծագման մասին Ռոբերտ Ուիլքենը ասաց, որ այ հրեերեն բառ է,որը

---

1 Այլընտրանքային Ծառայությունների Գիրք 1980

2 1899, էջ.33-37

3 Ջ.Ռ.Հարրիս Կելսուսը և Արիստեղեսը 1921

նշանակում է « խեղճ անձինք» և շարունակում է բացատրել, որ չկա ոչ մի վկայություն, հաստատելու որոշ քրիստոնյա հեղինակների հայտարարությունը ,որ այն ծագել է մի մարդուց, որի անունն էր «Էբիոն», նա փաստում է. «Վերջին տարներին, Էբիոնեթցիներ ծագումը , պատմությունը և որոշակի կերպարը աշխույժ բանավեճերի առարկա է: Հնարավոր է, որ Էբիոնիթցիների արմատները գնում են մինչ վաղ Քրիստոնեության ժամանակաշրջանի պատմություն, որտեղ Քրիստոնյաների մեծամասնությունը հրեաներ էին և ոմանք շարունակում էին հետևել Հրեական օրենքին:Եթե այդպես է, նրանք կարող են հանդիսանալ Հուդդայականության ներսում գոյություն ունեցող Քրիստոնեական շարժում, որը ի վերջո հեռացրեցին, քանի որ Քրիստոնեությունը ընդունեց հեթանոս նորադարձների ներհոսքը: Այս Քրիստոնյաները դարձան որոշակի խումբ , որը մյուս այլ խմբերի հետ մերժվեց որպես հերետիկոսություն, ձևավորված «մեծ» եկեղեցու կողմից: Նրանց ,երբեմն նմանեցնում են Մինիմի, հերետիկոսների հետ, որը նշվել է Թալմութում: Էբիոնիթցիները հրեաներ էին, ովքեր ընդունեցին Նազովրեցի Հիսուսին որպես Մեսսիա, Քրիստոս, շարունակելով իրենց ինքնությունը որպես հրեաներ: Նրանք զարգացրեցին իրենց հարաբերությունները և հրեաների և քրիստոնյաներ հետ, չնայած այն բանի ,որ նրանցից ոչ մեկը չէր խրախուսում այդ խումբը: Նրանք հետևեցին Հրեական օրենքին, կատարելով թլպատում, պահելով Շաբբաթ և

նշելով Հրեական տոները և պահպանելով դիետայի օրենքները և այլ Հրեական սովորույթները:Նրանք հրաժարվեցին Պողոս առաքյալից, Հրեական օրենքը պախարակելու պատճառով: Նրանք դիտում էին Հիսուսին, որպես մարգարե, Հրեա մարգարեների շարքում ընդունված մարդ, ինչպես նկարագրված է Օրինաց 18:15-ում և մերժում էին կույս ծնունդը: Նրանք արդարացնում էին իրենց կյանքի ձևը, հրապուրվելով Հիսուսի կյանքի օրինակով: Նա թլպատության էր ենթարկվել, հետևում էր Շաբբաթին և տոնում էր Հրեական տոները և սովորեցնում էր, որ պետք է հետևել օրենքի բոլոր ցուցումներին: Նրանք տոնում են Զատիկը նույն օրը , երբ Հերաներ են տոնում և նրանք պահպանում են Երուսաղեմը բարձր հարգանքով:» [1]

Ավելին, ըստ Ուիլքենի գոյություն ունեն այլ Հրեա Քրիստոնեական աղանդներ, որոնցից են Նազովրեցիները[2],Սումմաչիանցիները և Էլկեսացիները: Քանի որ դժվար է տարբերակել նրանց , նա առաջարկում է , որ «Էբիոնացիները» կարող էին նկարագրել ցանկացած Հրեա Քրիստոնեության կերպար, որը ընդգծում էր օրենքի պահպանումը :Էբիոնիթցիները ունեին իրենց կտակարանը և հեղինակները: Ուիլէենը նշում է երեք Հրեա

---

1 Կրոնների Հանրագիտարան էջ. 576

2 Նրանք հավատում են կույս ծննդին և որ Հիսուսը Հրեա ժողովրդի մարգարեն և Մեսսիան էր :

Քրիստոնեական կտակարաններ: Նա գրում է. «Վերջին քառորդ դարում ,տեղի ունեցավ Հրեա Քրիստոնեության վերածնունդ, որը խրախուսում էր հրեա քարոզչությունը …այդ ժամանակաշրջանից հետո,մենք շատ քիչ բան գիտենք Էբիոնիթցիների մասին:»

Ըստ Քոմփթոնի Հանրագիտարանի ,վաղ Հրեա Քրիստոնյաներին հետապնդում էին, որովհետև նրանք ընդունում էին, որ Հիսուսը սպասված Մեսսիան էր, մինչ դեռ հրեական հեղինակությունները ենթադրում էին ,որ նա դավաճան և ինքնակոչ էր :

«Վաղ Քրիստոնյաները բոլորը հրեաներ էին:Նրանք մնացին Երուսաղեմում և Տաճարում շարունակեցին կրոնական ծիսապահպանությունը: Նրանք իրենց եղբայր հրեաներից տարբերվում էին միայն նրանով,որ հավատում էին,որ Մեսսիան եկել է :Եթե նրանք պահպանեին իրենց համոզվածությունը ,ապա հուդդայականության մեջ կարող էին մնալ որպես աղանդ: Ամեն դեպքում, բոլոր նրանց ,ովքեր լսում էին, նրանք քարոզում էին այն ,որ Հիսուսը ,ում Հրեական հեղինակությունները հետապնդում էին, Մեկն է ում Իսրայելը երկար սպասում էր : Այս քարոզչությունը առաջացրեց կրոնական ղեկավարների մեծ թշնամանքը և վաղ քրիստոնյաներին սկսեցին հետապնդել… այս

Քրիստոնյաները գաղափար չունեին տանելու իրենց ուղերձը Իսրայելի սահմաններից դուրս :»[1]

Աստծո Միասնության գաղափարը և Հիսուսի մարգարեական, մարդկային բնույթը , գրավեց շատ վաղ համայնքների, որոնք որդեգրեցին Հիսուսի ուսմունքները որպես հիմք և իրենց կյանքի ձև:Այդ համայնքներից էին էբոնիթացիները, Նազովրեցիները, Սերիթիացիները, Բասիլիդացիները, Կարպոքրատացիները, Հիփսիստարիանցիները, Սումմաչիանցիները և էլկեսիացիները :

Երրորդական Քրիստոնյաները նշում էին, որ այս խմբերը «վաղ Եկեղեցու կողմից միշտ դիտվել են որպես հերետիկոս:» Սրանով, նրանք նկատի ունեին իշխող Եկեղեցին, առանց փորձի, հաստատելու արդյոք այդ եկեղեցին հետևում է իսկական ուսմունքներին: Կրկնելով Ուիլբենին, օրինակ Էբիոնիթացիները «հեռացան, երբ Քրիստոնեությունը ընդունեց նորադարձների հոսքը: Փաստորեն այս Քրիստոնյաները դարձան որոշակի խումբ, որը մյուս խմբերի հետ միասին մերժվեց որպես հերետիկոսներ, իշխող «մեծ» եկեղեցու կողմից:»[2]

---

1 Քոմթոնի Հանրագիտարան, «Քրիստոնեություն» Ընտանեկան Գրադարան 1997,

2 Կրոնների Հանրագիտարան, էջ.576

Այս ցույց է տալիս, որ այսպես կոչված «հերետիկոս» եկեղեցին մերժման է ենթարկվել «իշխող» Քրիստոնեության կողմից: Այլ կերպ, Հիսուսի ուսմունքների վաղ հետևորդները պետք է դատապարտության ենթարկվեին ընդունված հավատքի հետագա հետևորդների կողմից:

Հանս Յոհակիմ Շութսը, իր «Աստվածաբանություն և հրեա Քրիստոնեության Պատմություն» աշխատության մեջ, հաշվի առնելով Հարնաքի և Շլաթերի հետազոտությունները և ավարտուն տեսքի բերելով Ս. Քլեմենի, Թ.Անդրայի և Հ.Հ Շադերի աշխատությունները,եկավ հետևյալ լայնորեն հիմնավորված եզրակացության. «Չնայած, հնարավոր չէ հաստատել կապի ճշգրիտ ապացույցը, Մուհամմեդի անուղղակի կախումը Հրեա Քրիստոնեության աղանդավորականությունից ,կասկածից դուրս է: Այս թողնում է մեզ իրական աշխարհի պատմական հարթությունները պարադոքսի մեջ. Փաստը, մինչ Հրեա Քրիստոնեությունը Եկեղեցում անհայտացավ , այն պահպանվեց Իսլամում և ըստ դրա ընթացող ազդակների, այն հասել է առնվազն մեր ժամանակներ:»[1]

---

1 Հանս Յթհակիմ Շոփս. «Աստվածաբանությունը և Հրեա Քրիստոնեության Պատմությունը;»1949. Էջ.342

Հանս Քունգ աթ ալը նշեց,որ «Վաղ Հրեա Քրիստոնեության և Իսլամի սովորույթային և պատմական զուգահեռները անխուսափելի են :»[1]

Ջոն Թոլանդը 1718 թվականին գրելով ,եզրակացնում է .«Մինչ Նազովրեցիները, կամ Էբիոնիթցիները բոլոր Եկեղեցական պատմաբանների կողմից միաձայն ճանաչվել են առաջին քրիստոնյաներ, կամ նրանք, Հրեաներից, ովքեր հավատացել են նրան, ովքեր նրա ժողովուրդը և առաքյալներն էին, որոնց հետ նա ապրել և մահացել էր և նրանք ականատես էին նրա արարքներին,այս ամենը հաշվի առնելով, ես ասում եմ, թե ինչպե՞ս է հնարավոր ,որ նրանք լինեն մյուսներից առաջինը ,քանի որ նրանց համարում էին առաջին հերետիկոսները, ովքեր կարող էին կազմավորել Հիսուսի դոկտրինների սխալ գաղափարները և նկարագրերը:Եվ, ինչպե՞ս կարող են Գենտալացիները, ովքեր հավատացին Հիսուսին նրա մահից հետո ունենալ Հիսուսի և դոկտրինի մասին գաղափար քարոզներից և մարդկանց տեղեկություններից, ովքեր երբեք չէին տեսել Հիսուսին, ,կամ որտեղի՞ց նրանք

---

1 Հանս Քունգ. «Քրիստոնեությունը և Աշխարհի Կրոնները. Իսլամի, Հիդուիզմի, Բուդդայականության երկխոսության ուղին» 1986, էջ 24

կարող էին ունենալ իրենց տեղեկությունները, բացառությամբ հավատցյալ Հրեաների:»[1]

ԱՐԴՅՈ՞Ք ՀԻՍՈՒՍԸ ԱՍՏՎԱԾ Է

Աստվածաշնչի Բառարանը ասում է. « Կասկածելի է ,արդյոք Հիսուսը գործածել է «Աստծո Որդի» արտահայտությունը իր վերաբերյալ:»

Ադրիան Թաթչերը գրեց. «Հազիվ թե լինի Նոր Կտակարանի իրավասու գիտակ, ով պատրաստ է պաշտպանել տեսակետը, որ Հովհաննեսի «Ես եմ» բացարձակ գործածման չորս դեպքերը ,կամ այլ գործածությունների մեծամասնությունը, պատմականորեն կարող են վերագրվել Հիսուսին:»[2]

Դեյվիդ Բրաունը ասաց, որ. «Գոյություն ունի լավ վկայություն, առաջարկելու, որ Հիսուսը իրեն երբեք չի տեսել երկրպագությանը համապատասխան առարկա,» այդ «հնարավոր չէ հիմնավորել որևէ հայտ կապված Քրիստոսի աստվածայնության բանական լինելու հետ , քանի որ մեկ անգամ մենք հեռացել ենք ավանդական նկարագրությունից, ինչպես արտացոլվել է Սուրբ

1 Ջոն Թոլանդ. «Նազովրեցիներ»1718 էջ 73-76. Գիրքը կարելի է գտնել Բրիտանական Գրադարանում
2 Ադրիան Թաթչեր, «Իրական անձ, Իրական Աստված» Լոնդոն 1990, էջ 77

Հովհաննեսի Կտակարանի գիտական ընկալման մեջ:»[1] Սակայն նա ասում է .«Անիմաստ է ենթադրել,որ մարդկային ուղեղը կարող է բանական լինել իր իսկ աստվածայնության մեջ:»[2]

Նախկին Արքեպիսկոպոս և Նոր Կտակարանի գիտակ, Մայքլ Ռամսին գրում է . «Հիսուսը աստվածայնություն չի հայտարարել իր համար:»[3] Նա նույնպես ասում է.

«Աստծո Որդի» տիտղոսը չի կարող լինել բարձր կարևորություն, քանի որ Հրեա շրջանակներում այն կարող էր նշանակել ոչ ավելին քան Մեսսիա կամ իրոք, ամբողջ Իսրայելի ազգը և հայտնի Հելլենականության մեջ, գոյություն ունեին շատ Աստծո որդիներ ,որը նշանակում էր ներշնչված սուրբ մարդ:»[4]

Ջեյմս Բարրը վիճում է այն հարցի շուրջ, որ «Աբբա» արտահայտությունը ,որը սովորաբար գործածվում էր նկարագրելու Հիսուսի «աստվածային որդի լինելը»

---

1 Դեյվիդ Բրաուն «Աստվածային Երրորդություն» 1985 էջ.108
2 Իբիդ էջ.106
3 Մայքլ Ռամսի «Հիսուսը և ապրող անցյալը» 1980 էջ.39
4 Իբիդ էջ.43

չունի անձնական բնույթ, որը սովորաբար վերաբերում է դրան, այլ ուղղակի նշանակում է «հայր»:[1]

Ջեյմս Դունը նշեց երկու դեմ և կողմ փաստարկներ, որոնք վերաբերում են «Աբբա» բառի գործածման բնույթին: Դունը նույնպես ասաց. «Չկա ոչ մի իրական վկայությունն Հիսուսի վաղ սովորույթներից, որը կարող է բավարար կերպով կոչվել աստվածայնության բանականություն :»[2]

Բրայան Հեբլեվեյթը ընդունում է որ. «Այլևս հնարավոր չէ պաշտպանել Հիսուսի աստվածայնությունը , վկայակոչելով Հիսուսի պահանջները:»[3]

Սանդերսը գրում է. «Հաճախակի կրկնվող պահանջը, որ Հիսուսը «իրեն դրեց Աստծո տեղ» սպառվել է : Նա հաճախ այդպես անում էր մեղքերը ներելու , սակայն մենք պետք է նկատենք ,որ նա միայն արտաբերեց թողություն ,որը Աստծո արտոնությունը չէ , այլ քահանայականությունը:»[4]

1Ջեյմս Բարր «Աբբա, Հայր» Աստվածաբանական Ամսագրում- հատոր 91, համար 741;1988
2 Ջեյմս Դունն , Քրիստոսաբանությունը Գործածության մեջ , էջ.60
3 Բրայան Հեբլեվեյթ «Վերամարմնավորում» 1987, էջ 74
4 Սանդերս, Հիսուսը և Հուդայականությունը, 1985 էջ.240

ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

«Օվ, գրերի Մարդիկ, մի գործեք անակարգություն ձեր կրոնում, վերագրելով աստվածային հատկություններ Ալլահի արարածներին և երկրպագելով նրանց անսահման կամ ասեք միայն ճշմարտությունը Ալլահի մասին: Մեսսիան, Հիսուսը, Մարիամի որդին, միայն Ալլահի Մարգարեն էր և Նրա խոսքը ,որը նա ուղղեց Մարիամին և հոգին արարվեց Նրա հրամանով: Այսպիսով , հավատացեք Ալլահին և Նրա մարգարեներին : Մի ասեք «Երեք» դադարեք – այդպես ավելի լավ կլինի ձեզ համար :Իրոք, Ալլահը Մեկ Աստված է, փառք Նրան, բարձրյալ է Նա որդի ունենալուց: Նրան են պատկանում երկինքների մեջ և երկրում գոյություն ունեցող ամեն բան:Եվ բավարար է Ալլահը որպես գործերի տնօրինող:»

(Ան-Նիսաա: 171)

Այսօր, քրիստոնյաների մեծամասնության համար երրորդությունը բանալի գաղափար է, սակայն Հիսուսի վաղ հետևորդների համար անընկալելի էր: Նոր Կաթոլիկ Հանրագիտարանը ,որը պաշտոնապես հաստատվել է Կաթոլիկ Եկեղեցու կողմից, բացատրում է , որ Երրորդության գաղափարը ներկայացվել է քրիստոնեությանը , տասնչորսերրորդ դարում:

«Որոշ թարգմանիչներ, և կտակարանական աստվածաբաններ ,ներառյալ Հռոմեական Կաթոլիկների աճող քանակ, ասում են, որ չպետք է խոսել Նոր Կտակարանի Երրորդությունից, առանց լուրջ որակավորման :Գոյություն ունեն դոգմայի որոշ պատմաբաններ և համակարգային աստվածաբաններ,որոնց զուգահեռ ընկալումը կապված Երրորդության հետ այն է, որ երբ որևէ մեկը խոսում է Երրորդության մասին առանց որակավորման,նա պետք է շարժվի Քրիստոնեական ծագումների ժամանակաշրջանից ,ասելով չորրորդ դարի վերջին քառորդ:Միայն դրանից հետո ,այն կարող է կոչվել վերջնական Երրորդական դոգմա ՛Մեկ Աստված երեք անձում՛,որը մանրակրկիտ ձուլվում է Քրիստոնեական կյանքում և մտքում... այն երեք դարյա դագմատիկ զարգացման արդյունք է:»[1]

Աստվածաշնչի Օքսֆորդյան Ընկերակցությունը, որը ունի Ամերիկայի և Եվրոպայի տարբեր առաջատար աստվածաբանական հաստատությունների և համալսարանների ավելի քան երկու հարյուր վաթսուն գիտնականներից և ակադեմիկոսներից գրառումներ, հայտնում է. ՛՛Քանի որ Երրորդությունը ուշ Քրիստոնեական դոկտրինի այսպիսի կարևոր մաս է, զարմանալի է որ տերմինը չի հայտնվում Նոր Կտակարանում:

1 Նոր Կաթոլիկ Հանրագիտարան, հատոր 14, էջ.295

Նմանապես, Աստծո երեք համահավասար զուգընկերների զարգացած գաղափարը ,որը գտնվել է ավելի ուշ ծագումնաբանական ձևավորումների մեջ, չի կարող պարզորեն հայտնաբերվել կանոնների սահմանների շրջանակներում:՛՛[1]

Ջոն Մաքքենզին, ՛Աստվածաշնչի Բառարանում՛նշում է .«Աստծո Երրորդությունը սահմանված է Եկեղեցու կողմից, որպես հավատք , որ Աստծո մեջ գոյություն ունեն երեք անձիք, ովքեր ապրում են մեկ բնույթում: Այդ հավատքը, սահմանված որպես այդպիսին, հասել է միայն Մ.Թ 4-րդ և 5-րդ դարերում և հետևաբար հստակորեն և պաշտոնապես չի հանդիսանում աստվածաշնչյան հավատք:»[2]

Դեյվիդ Լիլ Ջեֆրին, գրելով Անգլիական Գրականության մեջ Աստվածաբանության Բառարանի Ավանդույթները, նշում է. «Ըստ ուղղափառ Քրիստոնեական դոկտրինի, Աստված մեկ բնույթ է երեք անձում. Հայր, Որդի և Սուրբ Հոգի:Նրանցից ոչ մեկը չի նախորդում կամ արարում է մյուսին, կամ բարձր է իշխանությամբ կամ արժանապատվությամբ: Հստակ աստվածաբանական առումներով,նրանք բնույթով կամ էությամբ մեկն են, համահավերժ և

---

1 Բրյուս Մեթսգեր և Մայքլ Դ. Քուգան. Օքսֆոչդյան Ընկերակցությունը Աստվածաշնչում. Օքսֆորդի Համալսարանական Տեղեկատվություն, էջ.782-783

2 Ջոն Մաքքենզի, Աստվածաշնչի Բառարան. Էջ.899

համահավասար:Այսպես հայտարարված դոկտրինը չի հայտնվել գրում, Երրորդության ուղղափառ դոկտրինը աստիճանաբար դրոշմվել է երեք կամ ավելի դարերի ընթացքում: Զարմանալի չէ,միգուցե, որ աստվածային անձանց համահավերժությունը և համահավասարությունը մնում է աստվածաբանական վիճաբանությունների խնդիր և ուստի հաճախ քննարկվում է հերետիկոսության համատեքստում: 381 թվականին, Կոնստանտինապոլսում եպիսկոպոսները հանրագումար կազմակերպեցին և սահմանեցին ուղղափառ դոկտրինը իր վերջնական տեսքով:»[1]

Ֆ.Զ, Ուլկենը, Ավստրալիացի բապտիստը, ՛Քրիստոնեականություն՛ աշխատությունում գրում է. «Հին Կտակարանում, Աստծո Միասնակությունը պարզորեն հաստատվեց: Հրեական դավանանքը ,այսօր կրկնվող ամեն սինագոգում ասում է. «Լսիր, ով Իսրայել, Տերը մեր Աստվածը Մեկ Տեր է:» (Օրինաց 6:4) Այս առաջին քրիստոնյաների հավատքն է ,այսպիսով Պողոսը գրում է.«Գոյություն ունի մեկ աստված և բոլորի Հայր, Ով ամենից վերն է, բոլորի միջով և բոլորի մեջ է:» (Եփես. 4:6) «Սակայն, այս դավանանքի լրացումը կամ փոփոխումը աստիճանաբար դարձավ անհրաժեշտ:»[2]

---

1 Դեյվիդ Լիլ Ջեֆրի, Անգլիական Գրականությունում Աստվածաբանական Ավանդույթի Բառարան. էջ. 785

2 Ֆ.Զ Ուիլքեն, Քրիստոնեականություն

Ըստ Երրորդության տեքստերի վկայության, Աստվածաշնչի Թարգմանչաց Բառարանը փաստում է. «Երեք երկնային վկաների տեքստը(1Հովհաննես5:7 Արքա Ջեյմսի տարբերակում), Նոր Կտակարանի վավերական մաս չէ:»[1]

««1 Հովհաննես 5:7, Արքա Ջեյմսի Տարբերակում կարդում է. «Գոյություն ունեն երեք , որ գրառում են երկնքում, հայրը, Խոսքը և Սուրբ հոգին և այս երեքը մեկ են սակայն, այս միացում է ,որում չկա ոչ մի հետք մինչ չորրորդ դարի ուշ ժամանակարջանը :»»[2]

Էրդմանսի Աստվածաշնչյան Բառարանը հայտնում է. «1 Հովհաննես 5:7,Տեքստուս Ռեսեպտուսում, որը ներկայացված է Արքա Ջեյմսի Տարբերակում, ակնհայտ է դառնում ,որ Հովհաննեսը հասել է Երրորդության դոկտրինին պարզ կերպով , Հոր, Որդու և Սուրբ Հոգու, սակայն այս տեսքստը ակնհայտ տեղադրում է , քանի որ ոչ մի Հունական ձեռագիր այն չի պարունակում :»[3]

Էդվարդ Գիբոնը նույնպես գիտակցեց ,որ այս կեղծիք է և քանի որ այս փաստը այժմ լայն ընդունված է և հեռացվել է Աստվածաշնչի թարգմանությունների մեծամասնությունից, ապա այսպիսի ընդունումը

---

1 Աստվածաշնչի Թագմանչաց Բառարան Հատոր 4, էջ. 711

2 Իբիդ էջ. 871

3 Էրդերմանս Աստվածաշնչային Բառարան էջ. 1020

ժամանակ է պահանջում: Ռիչարդ Փորսոնը պաշտպանեց Գիբոնին,ավելի ուշ տպագրելով ավերիչ եզրահանգող ապացույց , այն մասին, որ տարբերակը առաջինը Աստվածաշունչ տեղադրվել է Եկեղեցու կողմից ,չորրորդ դարի վերջում: Ինչ վերաբերում է իր եզրակացությանը , Փորսոնը ասաց.

«Նրա փաստարկները հանգեցնում են վիճաբանության, որը հարուստ է գիտելիքներով և աշխույժ բանականությամբ և նրա հակառակորդները ոչ արժանի են, ոչ էլ գտնում են որևէ քառորդ նրա ձեռքերի Երեք երկնային վկաների վկայությունը այժմ կարող է մերժման ենթարկվել արդարադատության յուրաքանչյուր դատարանում, սակայն նախապաշարումը կույր է , իշխանությունը խուլ և մեր գռեհիկ աստվածաշունչները կարող են երբևէ աղտոտվել այս կեղծ տեքստից:´´[1]

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՋԱՑՈՒՄԸ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

« Նզովք , կործանում, նրանց, ովքեր գրում են ՛գրեր՛ իրենց իսկ ձեռքերով , ապա ասում, » Այս Ալլահից է, «որպեսզի փոխանակեն այն փոքր արժեքով: Նզովք ,

---

1 Ջեյմս Բենթլի, Սինայ Լեռան Գաղտնիքները, էջ. 30-33

կործանում նրանց, այն բանի համար, ինչ նրանց ձեռքերը գրել են և նզովք, կործանում նրանց, այն բանի համար , ինչ նրանք վաստակել են:»

(Բակարա :79)

Քենեթ Քրեգը հայտնում է Նոր Կտակարանի մասին, « Գոյություն ունի խտացում և խմբագրում,գոյություն ունի ընտրության արտադրություն և վկա: Կտակարանները եկեղեցու միտք են եկել հեղինակների կողմից :Նրանք ներկայացնում են փորձ և պատմություն :»[1]

Նմանապես,Դոկ.Ֆոն Թիշենդորֆը, Երրորդական ամենավճռական պաշտպաններից մեկը, խոստովանում է, որ Նոր Կտակարանը «շատ դրվագներում ենթարկվել է այնպիսի լուրջ իմաստային փոփոխությունների, որ թողնում է մեզ ցավալի անորոշության մեջ, թե ինչ են իրականում Առաքյալները գրել:»[2]

Այս բաժնի նպատակն է ,համակցել Աստվածաշնչի փաստերը, ինչպես որ ներկայացվել են Քրիստոնյա գիտնականներին : Հետաքրքիր է, որ Հին Կտակարան գրքի հեղինակը ,Երեմիան, գիտակցեց նույն բոլոր փաստերը շատ տարիներ առաջ. ««Ինչպե՞ս կարող եք

---

1 Քենեթ Քրեգ. Մինարեթի Կանչը էջ. 277

2 Ջեյմս Բենթլի, Սինայ Լեռան Գաղտնիքները էջ. 117

դուք ասել. «Մենք իմաստուն ենք, մենք ունենք Տիրոջ օրենքը.» երբ իրենց սուտ գրիչների գրագիրները կեղծել են այն: Իմաստունը դրվել է ամոթի , նրանց զցել են ծուղակը և զարհուրանքը:Նրանք արհամարհում են Տիրոջ խոսքը , այսպիսով , ինչպիսի՞ն է նրանց իմաստությունը:»»[1]

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ և ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Աստվածաբանները գիտակցել են, որ Աստվածաշունչը ունի շատ հակասություններ և գերադասում են չբացատրել դրանք , ինչպես անում են ոմանք: Պարզապես, նրանք ընդունում են այս փաստը, հաճախ առանց իրենց հավատքի ժխտման: Այս այնպիսի ազնվություն է , որ հաշվում է քրիստոնյա գիտնականների մեծ քանակություն, ովքեր փնտրում են իրենց կրոնի ծագումը :

Աստվածաշնչի հակասությունների շատ օրինակների ցուցարկումից հետո, Դոկ. Ֆրեդերիկ Քենյքնն ասաց.«Բացի շատ հակասություններից,ինչպիսիք են հետևյալները, հազիվ թե գոյություն ունենա մի տարբերակ,որտեղ չլինի արտահայտությունների որոշ տատանումներ ,հին գրերից, որից հավաքել են

1 Երեմիայի գիրք 8:8-9

Աստվածաշունչը: Ոչ ոք չի կարող ասել , որ այդ լրացումները կամ բացթողումները կամ փոփոխությունները զուտ անտարբերության հարցեր են :»[1]

Աստվածաշնչի Վերանայված Կայուն Տարբերակում, 1978 թվականին, «բարձր մեծության» երեսուն երկու Քրիստոնյա Գիտնականներ, ապահովված Քրիստոնեական հիսուն դավանանքներով ,գրեցին լիազոր տարբերակում, որը հայտնի է նաև Արքա Ջեյմսի Տարբերակ, որ. «Արքա Ջեյմսի Տարբերակը ունի շատ արատներ, որոնք այնքան շատ և լուրջ են, որպեսզի կոչեն վերանայված :»

1957 թվականին, Եհովայի Վկաները տպագրեցին վերնագիր. «Աստվածաշնչի 50,000 սխալները» ,իրենց ամսագրում գրելով. «Միգուցե Աստվածաշնչի մեջ գոյություն ունի 50,000 սխալներ, որոնք սողոսկել են Աստվածաշնչի տեքստեր:»[2]Այնուամենայնիվ ,նրանք շարունակում են ասելով,«որպես ամբողջականություն., Աստվածաշունչը դեռ ճշգրիտ է:»

΄Ձեռագրերի Պատմություն΄ աշխատությունում, Ռեվերենդ Ջորջ Ի. Մերնիլը մեջբերում է պրոֆեսոր Առնոլդին ասելով. «Գոյություն չունեն ավելի քան 1500-

---

1 Ֆրեդերիկ Քենյոն . Մեր Աստվածաշունչը և Հնագույն Գրերը

2 Սեպտեմբերի 8, 1957

ից 2000 դրվագներ, որտեղ կա որևէ անորոշություն, ինչպես իրական տեքստում :»

՛Հինգ Ավետարանները՛,որը գրվել է՛Հիսուսի Սեմինար՛ խմբի կողմից,որը ներկայացնում է յոթանասուն չորս Քրիստոնեական գիտնականներ ամբողջ աշխարհի Աստվածաշնչյան ուսումնական հաստատություններից և համալսարաններից[1], ովքեր աշխատեցին վեց տարի նվիրված ուսումնասիրելով :

Որոշելով ներկայացնել ավետարանների թարգմանություն, անկողմակալ իրենց անձնական քրիստոնեական հավատքից, նրանք ջանացին Աստվածաշնչում հայտանաբերել Հիսուսի իրական խոսքերը: Ամբողջ տեքստից, նրանք ընտրեցին այն դրվագները , որոնք ըստ իրենց, Հիսուսի վավերական խոսքերն են և գունա-կոդավորել են դրանք:

Չնայած, մենք ունենք երկար դրվագների վերացման վարապահումներ նրանց կողմից, ովքեր արհամարհում են բանավոր մշակույթը, հիշողության ունակությունը ,ինչպես նաև Հիսուսի Սեմինարների միտումը հավասարեցնել հրաշք առասպելի հետ, նրանց եզրակացությունն էր, որ «82% խոսքերը որոնք

1 ՛Հիսուս Սեմինար՛, Ռոբերտ Ու. Ֆունկ և Ռոյ Ու. Հուվեր. ՛Հինգ Կտակարաններ՛1993 էջ. 533-537

վերագրում են Հիսուսին կտակարաններում , իրականում նա չի ասել:»[1]

Նրանք շարունակում են ասելով.«Աստվածաշնչյան գիտնականները և աստվածաբանները սովորել են տարբերակել պատմության Հիսուսին , հավատքի Քրիստոսից: Այդ ցավալի դաս էր և եկեղեցու և գիտնականների համար :Այս տարբերությունը երկու կերպարների միջև, տարբերություն է պատմական անձի , ով ապրել է որոշակի ժամանակահատվածում և վայրում, և կերպարի, ում տվել են առասպելական դեր , որտեղ նա իջել է երկնքից փրկելու մարդկությունը և իհարկե, ի վերջո վերադարձել է այնտեղ:»

Վերոհիշյալ մեջբերումները միայն հեղինակների կարծիքներն են,երկրորդ ,առասպելական դերի մեջբերումը ,հասկանալի է այն փաստից, որ Հիսուսի գաղափարը Քրիստոնեության մեջ լայնորեն հիմնված է հեթանոս Հռոմեական առասպելական կերպարների վրա և հաջորդ գլուխը հասցեագրված է դրան :

՛Հիսուսի Սեմինարի՛ հնեաբանական փաստը ավելի կարևոր է ,քան այն, ինչ կարելի է համարել ՛նրանց կարծիքը.՛

« Փաստորեն, մենք չունենք որևէ կտակարանի բնօրինակը: Մեզ չի պատկանում ամբողջ

---

1 Իբիդ. Էջ.5

Աստվածաշնչի գրքերի ինքնագիները: Կտակարանների պահպանված ամենահին կրկնօրինակների ժամանակը սկսվում է Հիսուսի մահից 175 տարի հետո և երկուսից ,ոչ մեկը չի նմանվում մյուսին :

Եվ ձեռագիր գրերը մշտապես տարբեր մարդկանցից ՛ուղղվել՛ են այստեղ և այնտեղ:Բացի այդ, համարյա, երկու դարյա այս անդրունդը նշանակում է, որ բնօրինակ Հունական, կամ Արամեական տեքստը կրկնօրինակվել է ավելի քան մեկ անգամ, մինչ հասել է մեզ այս աստիճանում:»[1]

«Հունական Կտակարանների ամենահին կրկնօրինակների հիմնական մասը , որը հիմա գոյություն ունի ,ինչպես մենք գիտենք, հասնում է մոտ 200 Մթ: Այնուամենայնիվ, Հովհաննեսի Կտակարանի փոքր հատվածը կարող է թվագրվել Մթ 125 թվականները, կամ ավելի շուտ, նույն մոտավոր ժամանակաշրջանը, ինչպես Էգերթոնի Կտակարանը: Էգորթոնը դոնորի անունն է:Սակայն այս հատվածները շատ փոքր են , ներկայացնելու տեքստի պատմության նվազագույն իրադարձությունները:Հունական կտակարանների ամենակարևոր կրկնօրինակները հայտնվել են 19-րդ և 20-րդ դարերում, հիմնականում

---

1 Իբիդ էջ.6

թանգարաններում, մենաստաններում և եկեղեցական արխիվներում :»[1]

Նրանք վերջնականապես ամփոփել են այս հարցը ասելով.«... բացարձակ ճշմարտությունը այն է, որ Հունական կտակարանների պատմությունը , առաջին դարի իրենց արարումից սկսած մինչ առաջին կրկնօրինակների հայտանբերումը երրորդ դարի սկզբերին, մնացել են անհայտ և հետևաբար անքարտեզ տարածքում:»

Աստվածաշնչի Փիկի մեկնաբանությունը նշում է. «Քաջ հայտնի է , որ նախնական Քրիստոնեական Կտակարանը ի սկզբանե փոխանցվել է բանավոր և որ այս բանավոր ավանդույթը պատճառ է հանդիսացել արարքի և խոսքի փոփոխման: Նմանապես ճշմարիտ է ,որ երբ Քրիստոնեական գրառումները կատարվել են գրավոր ,այն շարունակել է լինել բանավոր տատանումների թեմա ,ակամա և կանխամտածված , գրագիրների և դպիրների ձեռքերում :»[2]

Բրիտանիկա Հանրագիտարանը փաստում է. «Փաստորեն, Նոր Կտակարանի ամեն գիրք, բացառության Սուրբ Պողոսի չորս Նամակների, ներկայումս ավել կամ պակաս հակասություններով և

1 Իբիդ էջ.9

2 Աստվածաշնչի Փիկի Մեկնաբանությունը էջ. 633

միջարկություններով, տեղադրված տարբերակներով , հաստատում են դրանք :»[1]

Հայտնելով Աստվածաշնչի հակասության շատ օրինակներ, Դոկ. Ֆրեդերիկ Քենյոնը ասաց. «Բացի մեծ հակասություններից , ինչպիսիք են նշվածները, հազիվ թե լինի մի տարբերակ, որում չլինի մի քանի օրինակներով արտահայտության տարբերակներ, որոնք վերցվել են հին գրերից, հիմք հանդիսանալով Աստվածաշնչի համար:Ոչ ոք չի կարող ասել ,որ այս լրացումները կամ բացթողումները կամ փոփոխությունները զուտ անտարբերության խնդիրներ են:»[2]

Էիրմանը նշում է. «Աստվածաշնչի իրադարձությունների նախնական ոչ մի ձեռագիր գիրք այժմ գոյություն չունի:Փրկվել են դարերի ընթացքում պատրաստված կրկնօրինակներ, կամ ավելի ճշգրիտ կրկնօրինակների կրկնօրինակներ, դրանցից 5366 միայն հունարեն են , որոնք թվագրվում են երկրորդ դարից մինչ տասնվեցերորդ դար :Զարմանալիորեն, բացառությամբ փոքր դրվագների, նրանցից երկուսն անգամ նման չեն : Ոչ ոք չգիտի, թե որքան տարբեր ընթերցումներ են տեղի ունեցել փրկված

---

1 Բրիտանիկա հանրագիտարան , 12-րդ Հրատարակություն, հատոր 3, էջ. 643

2 Քենյոն,Եյր և Սփոթիսուդ, Մեր Աստվածաունչը և Հին Ձեռագրերը էջ.3

վկայություններում, սակայն նրանց քանակը կարող է լինել հարյուրներից հազարներ:» [1]

Թոլանդը նշում է. «Մենք արդեն գիտենք, թե ինչ աստիճանի, խարդախության և դյուրահավատության ձեռքերով են Քրիստոնեական Եկեղեցու նախնական ժամանակները , վերջին էակը այնքան պատրաստ է ընդունելու, որքան առաջինը պատրաստ է կեղծելու գրքերը : Այս չարիքը աճեց, ոչ միայն այն բանից հետո , երբ վանականները միակ կազմակերպիչներն էին և բոլոր գրքերի միակ լավ կամ վատ պահապանները, այլև ժամանակի ընթացքում դարձավ համարյա անհնարին տարբերելու պատմությունը հեքիաթից , կամ ճշմարտությունը սխալից ,որպես Քրիստոնեության սկզբնական և նախնական ձեռագրեր: Որքա՞ն անմիջապես, Առաքյալների իրավահաջորդները կարող էին այսքան կոպտորեն խառնել իրենց ուսուցիչների հանճարեղ ուսմունքները ,նրանց նկատմամբ այսպիսի կեղծ ածականներով :Կամ, եթե նրանք խավարում էին այդքան վաղ ժամանակ կապված այս խնդիրների հետ , ապա ինչպե՞ս կարող էին նրանց հետևել որպես լույս: Եվ դիտելով, որ այսպիսի Անվավեր գրքերը նույն հարթության վրա են դրվում Հայրերի կանոնական գրքերի հետ , ես ենթադրում են հետևյալ երկու հարցերը. «Ինչու՞ պետք է անկեղծ մեջբերված

---

1 Բարթ Էհրման. Գրերի Ուղղափառ Կոռուպցիան էջ. 27

Ալեքսանդր Քլեմենթի, Օրիգենի ,Թերթուլիանի և նմանատիպ հեղինակների բոլոր գրքրեր չհամարվեն հավաասարապես վավերական : Եվ , ինչ ճնշում կարող էր դրվել այսպիսի Հայրերի վկայությունների վրա , ովքեր ոչ միայն հակասում էին միմյանց , այլ նաև հաճախ նույն փաստերի հարաբերություններում անհամատեղելի էին իրենց իսկ հետ:»[1]

Այնուհետ էհրմանը ասում է ,որ «Այնուհանդերձ , գոյություն ունի տեքստային փոփոխությունների որոշակի տեսակներ, որոնց համար դժվար է ,առանձնացնել թարգմանչի նպատակադրված գործողությունը:Երբ Մարկոսի Կտակարանի վերջաբանում թարգմանիչը կցում է լրացուցիչ տասներկու տարբերակներ, ապա այն հազիվ թե կարող է համարվել զուտ վրիպում:»[2]

Աստվածաշնչի Փիքսի Մեկնաբանությունը ասում է.«Այժմ ընդհանուր համաձայնեցված է ,որ Մարկոսի 9-20 տարբերակները նախնական չեն : Դրանք չեն գտել հին Ձեռագրերում և իրոք, ակնհայտորեն գոյություն չունեն Մատթեոսի և Ղուկասի գործածած կրկնօրինակներում: 10-րդ դարի Հայկական Ձեռագիրը վերագրում է դրվագը Արիստոնին, հիշատակված Պապիաս քահանայի կողմից:» (Էուս. Հատ. III, xxxix 15)

1 Ջոն Թոլանդ Նազովրեցիներ 1718, էջ 73

2 Գրերի Ուղղափառ կոռուպցիա էջ. 27-28

Քենյոն եթ ալը նշում է , որ «Իրոք, Սուրբ Մարկոսի Հայկական թարգմանությունը վերջերս է հայտաբերվել, որում Սուրբ Մարկոսի վերջին տասներկու տարբերակները վերագրվում են Արիստիոնին, ով նաև հայտնի է որպես վաղ Քրիստոնեական Հայրերից մեկը և շատ հնարավոր է, որ այս ավանդույթը ճշմարիտ է:»[1]

Մ.Ա. Յուսսեֆֆը նկատեց.«Ինչպես տեղի ունեցավ, Վիկտոր Թունունենսիսը, վեցերող դարի Աֆրիկացի Եպիսկոպոսը , կապված իր ՛Քրոնիկներ՛ 566 ՄԹ, հետ ասաց, որ երբ Մեսսալան Կոնստանտինոպոլսի հյուպատոսն էր 506 Մ.Թ., նա «ենթարկվեց գրաքննադատության և շտկումի» և գրված հեթանոս Կտակարանները համարվեցին անգրագետ Անաստասիուս Կայսրի կողմից: Ենթադրվում է, որ դրանք փոփոխվել են նախորդ դարերից , որպեսզի հարմարվեն վեցերորդ դարի Քրիստոնեությանը:»[2]

Գոդֆրի Հիգգինսը ասաց. «Հնարավոր չէ ժխտել, որ Սուրբ Մաուրի Բեննեդիկտյան Վանականները շատ տաղանդավոր և գիտակ էին, երբ Լատիներենը և Հունարենը ավելի քիչ տեղ ունեին:Քլեյանդի Լանֆրանկի Կյանք, Քենթերբերիի Արքեպիսկոպոս աշխատությունում գոյություն ունի հետևյալ դրվագը.«Լանկֆրանկը, Բեննեդիկտյան Վանականը,

---

1 Մեր Աստվածաշունչը և Հին Ձեռագրերը էջ.7-8

2 Մ. Ա.Յուսսեֆֆ Մեռյալ Ծովի Մագաղաթները, Բարնաբայի Կտակարանը և Նոր Կտակարանը էջ.81

Քենթերբերիի Արքեպիսկոպոսը , գտնելով, որ Գրերը դպիրների կողմից շատ աղավաղված են, թույլատրեց իրեն ուղղել դրանք, քանի որ հայրերի գրերը համաձայնեցված են ուղղափառ հավատքի հետ:»[1]

Հիգգինսը շարունակում է ասելով. ««Նույն Բողոքական աստվածությունը ունի այս ուշագրավ հատվածը. «Ես անաչառ խոստովանում եմ, որ ուղղափառները ,որոշ հատվածներում փոփոխել են Կտակարանները ...Նոր Կտակարանը, շատ հատվածներում անցել է այնպիսի լուրջ իմաստային փոփոխություն, որը մեզ թողնում է ցավալի անորոշության մեջ, թե ինչ են գրել Առաքյալները:»»[2]

Ընդհանուր առմամբ, Թիշենդորֆը գտավ ավելի քան 14,800 ՛ուղղումներ՛ Աստվածաշնչի միայն մեկ հին ձեռագրում, Սինայթիքուսի Կոդեքսում, որոնք հանդիսանում են այժմյան Քրիստոնեությանը մատչելի ամենահին կրկնօրինակները, ինը կամ տաս անհատական «ուղղում ներկայացնողներով», որը ներկայացվել է այս մեկ ձեռագրին, 400 թվականներից մինչ 1200 ականները :

Թիշենդորֆը ձգտում է իր հարաբերություններում այս սուրբ տեքստերի հետ լինել այնքան ազնիվ, որքան մարդկայնորեն հնարավոր է: Այդ պատճառով նա չէր

---

1 Գոդֆրեդ Հիգգինս

2 Ջեյմս Բենթլի. Սինա Լեռան Գաղտնիքները, էջ.117

կարող հասկանալ , թե ինչպես դպիրները կարող էին այսպես գիտակցաբար և սառնասրտորեն «թույլատրել իրենց այստեղ և այտեղ բերել փոփոխություններ, որոնք ոչ միայն բանավոր փոփոխություններ էին , այլև նյութապես վնասում էին իմաստը», կամ ինչու նրանք «չէին խուսափում կտրել մի հատվածը կամ տեղադրել մեկ այլը:»

Աստվածաշնչի Նոր Վերանայված Տիպական Տարբերակում [1] մենք ընթերցում ենք. «Արքա Ջեյմսի Տարբերակը լրջորեն վնասվել է :Տասնիններորդ դարի կեսերին, աստվածաշնչյան ուսումնասիրությունների զարգացման և շատ աստվածաշնչյան ուսումնասիրությունների հայտնաբերման ժամանակ, որոնք ավելի հին էին քան Արքա Ջեյմսի Տարբերակը ,առերևույթ դարձավ այն,որ այդ սխալները այնքան շատ էին, որ չէր կարելի կոչել վերանայում:»

Նույն ՛տարբերակի՛ նախաբանում նրանք ասում են. «Հազվադեպ է և ակնհայտ, որ տեքստը ենթարկվել է փոխանցման և որ տարբերակներից ոչ մեկը չի տրամադրում բավարար վերականգնում :Այստեղ մենք կարող ենք միայն հետևել իրավասու գիտնականների

1 Օքսֆորդ Պրեսս

լավագույն դատավճիռներին,որպես նախնական տեքստի հնարավոր վերականգնում :»[1]

Արևմտյան գրականության մեծ լուսավորիչը, Էդվարդ Գիբբոնը, բացատրում է Աստվածաշնչի միջամտությունը հետևյալ խոսքերով. «Այժմ պահպանված բոլոր ձեռագրերից, քանակով ութսուն,որոնցից մի քանիսը ավելի քան 1200 տարեկան են,Վատիկանի ուղղափառ կրկնօրինակները ,Ռոբերտ Ստեֆենսի Քոմփլութենսյան խմբագիրներից, դառնում են անտեսանելի և Դուբլինի և Բեռլինի երկու ձեռագրերը անարժան են ձևավորել բացառություն: 11-րդ և 12-րդ դարերում, Աստվածաշունչները շտկել են Լանֆրանկ, Քենթերբերիի Արքեպիսկոպոսը և Նիկոլաս, Հռոմեական Եկեղեցու ազատագրողը և Կարդինալը: Չդիմակայելով այս շտկումներին, հատվածը պահանջվում է քան հինգ Լատինական ձեռագրերում, ամենահին և անաչառ, երկու հատկություններ, որոնք հազվադեպ են միավորվում, բացառությամբ ձեռագրերի :Երեք վկաներ հաստատվել են մեր Հունական Կտակարաններում, Էրազմուսի խոհեմությամբ, Քոմփլութեսիան խմբագիրների ազնիվ մոլեռանդությամբ , տպագրական խարդախությամբ,

---

1 Այստեղ մենք նկատում ենք , որ նույնիսկ Աստվածաշնչի կրկնօրինակների ներածությունները , ուսումնասիրված Քրիստոնյաների կողմից , ընդունում են ,որ փոխանցված Աստվածաշունչը վստահելի չէ:

կամ սխալով ,փոխարինելով Ռոբերտ Ստեֆենսին Քրոշեթով և միտումնավոր կեղծիքով , կամ Թեոդոր Բեզայի տարօրինակ սխալ կարծիքներով :»[1]

ԹԻԵԴԵՍԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

Գոյություն ունեն ոմանք, ովքեր պնդում են պահպանել վաղ Քրիստոնեական տեքստերը: Այդ պնդում է մասնավորապես գերմանացի գիտնական Քարսթեն Թիեդը: Նա պնդում է , որ հայտաբերել է առաջին դարի Մատթեոսի Կտակարանի պապիրուսի հատված, որը գոյություն է ունեցել հարյուր տարի վաղ քան նրանք կարծում են :Ուստի, այս հատվածները կարող են դիտվել որպես Հիսուսի կյանքի ՛Վկաներ՛: Այս կարծիքը շատ տարածված էր Ավետարանական Քրիստոնյաների մեջ , ինչպիսիք են Ջոզեֆ ՛Ջայ՛ Սմիթը, ով հենվում է Թիեդեսի աշխատանքին :

Գրահամ Սթանթոնը,Նոր Կտակարանի Բրիտանիայի ամենանշանավոր գիտնականը և Մատթեոսի Ավետարանի առաջատար մասնագետը, հերքել է Թիեդի պնդումները: Հաշվի են առել նաև այս բնագավառի տաս ուրիշ առաջատար գիտնականների քննադատությունը:Նրանք ,Սթենթոնի պես, նույնպես

---

1 Էդվարդ Գիբբոն, Հռոմեական Կայսրության մայրամուտը և Անկումը , հատոր 4 էջ. 418

հերքում են Թիեդեյի այն սխալ պնդումը ,որ Մարկոսի Կտակարանը գտել են Մեռյալ Ծովի Մագաղաթներում:

